Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2021 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Մասիս քաղաքային համայնքի 2021թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ.

2020 թվականի Արցախյան պատերազմում գերի ընկած անձանց ընտանիքները հայտնվել են սոցիալապես ծանր վիճակում: Նշված ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով առաջարկվում է յուրաքանչյուր ընտանիքին հատկացնել 200 000 – ական դրամ մեկանգամյա այլ նպաստ: Այդ նպատակի համար անհրաժեշտ է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 600 000 դրամ՝ սոցիալական արտոնությունների այլ նպաստներ հոդվածին:

Ուսումնասիրելով Մասիս քաղաքի Երևանյան և Հանրապետության փողոցների տրանսպորտային երթևեկության ծանրաբեռնվածությունը, հետիոտների շարժը՝ պարզվել է, որ գլխավոր խաչմերուկի երթևեկության կանոնները կարգավորող լուսացույցերը աշխատում են խափանումներով և չեն բավարարում արդիական պահանջները, որի հետևանքով հաճախակի են դարձել վթարները այդ հատվածում:

Առկա խնդրի լուծման համար անհրաժեշտ է ձեռք բերել 4 հատ երկկողմանի թվային/վայրկյանացույցով/ լուսակիր, ժամանակակից հետիոտնային անցումի լուսացույցեր՝ 8 հատ և նշված լուսակիրի ու լուսացույցերի կառավարման վահանակ 1 հատ, որոնց համար բյուջեից անհրաժեշտ է հատկացնել 4 500 000 դրամ:

Առաջարկվում է բյուջեի ֆոնդային մասում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վարչական սարքավորումներ հոդվածից 4500 000 դրամ գումար հատկացնել ճանապարհային տրանսպորտ դասակարգման վարչական սարքավորումներ հոդվածին:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան